Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում

**<< Գյումրու արյան փոխներարկման կայան>>ՓԲԸ-ի 2015թ** կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:
Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «**ՇՄԳԱՓԿ-ՇՀԱՊՁԲ-11/15**»: Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել **ք.Գյումրի Մազմանյան 3ա** հասցեով, մինչև 2015թ. Փետրվարի 23-ը, ժամը 12,00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ռ.Սարգսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն **<< Գյումրու արյան փոխներարկման կայան>>ՓԲԸ-ի վարչական** շենքում,ք.Գյումրի, Մազմանյան 3ա հասցեով, 2015թ. Փետրվարի 23-ին, ժամը 12,00-ին:

Գնման առարկա է հանդիսանում **<< Գյումրու արյան փոխներարկման կայան>>ՓԲԸ-ի 2015թ** կարիքների համար՝ <<Դեղորայքի և պատվաստանյութերի>> ձեռքբերումը:

**<< Գյումրու արյան փոխներարկման կայան>>ՓԲԸ-ի** կարիքների համար՝<< Քիմիական նյութերի >> մատակարարման (որոնք կազմված են՝ թիվ 14 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

**<< Գյումրու արյան փոխներարկման կայան>>ՓԲԸ-ի** էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gyumribloodbank@mail.ru:

**Հարգանքով՝ << Գյումրու արյան փոխներարկման կայան>>ՓԲԸ**

Հավելված 5

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով

*ընթացակարգի հրավերի*

***N* ՇՄԳԱՓԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 *ծածկագրով***

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

ԴԻՄՈՒՄ

_______________________________-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

______________________________________-ի կողմից N __________________ ծածկագրով

Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի _________________________________ չափաբաժնին

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_________________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_______________-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_______________-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_______________:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_______________ _______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը՝ Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«____» ________ 20___թ.

Հավելված 5.1
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով
*ընթացակարգի հրավերի*

***N* ՇՄԳԱՓԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 *ծածկագրով***
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ____________ ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ______________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Գնման առարկայի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| ... | ... | | | |
| ... | ... | | | |

***3-րդ** *սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

****** *Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է* **4**-*րդ սյունակում.*

______________________________ ______________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«____» _________ 20___թ.

(ամսաթիվը, ամիսը)

ՆԱԽԱԳԻԾ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
N ՇՄԳԱՓԿ - ՇՀԱՊՁԲ-11/15

ք. Գյումրի «  » _______________ 2015թ.

**ՇՄ<<Գյումրու արյան փոխներարկման կայան>>**ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա.Չախալյանի , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ) , մի կողմից և _______________________, ի դեմս Ընկերության տնօրեն _______________ (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի առարկան**

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանգրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **քիմիական նյութեր** (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և դրա համար վճարել:

2. **Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված զնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում::

3. **Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 **Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չհանձնվելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի N1 հավելվածի պահանջներին չհամապատասխանող Ապրանք

ա) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց անմիջապես հետո կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3. Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանգրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելու հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանգրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը

պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----------- (---------------) դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ-ի դեկտեմբերի 25:

**5. Ապրանքի որակը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Վաճառողն ապրանքը հանձնում է սույն պայմանագրի N 2 հավելվածին համապատասխան ծավալով և ժամկետներում՝ ներկայացնելով հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ/ վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեղված պատասխանատվության միջոցները:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:
7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օվա համար պայմանագրի չկատարված մասի գնի 0.05 տոկոսի չափով:
7.3 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5%-ի չափով:
7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը (տուգանքը) հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:
7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05%-ի չափով:
7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ էին երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելու, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման և ֆինանսական միջոցների նախատեսման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

9.2. Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Աշխատանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ՄԱՏԱԿԱՐԱՐ |
|---|---|
| *ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ* | |
| << Գյումրու արյան | << >> ________ |
| փոխներարկման կայան>>*ՓԲԸ* | ________________________ |
| ք.Գյումրի, Մազմանյան 3ա | հեռ. ___________________ |
| հեռ. /0312/ 50418 | ՀՎՀՀ___________________ |
| ՀՎՀՀ 05502681 | |
| «Հայէկանոմ բանկ»ԲԲԸ | |
| Գյումրու մասնաճյուղ | ______________________ |
| Հ/Հ Հ/Հ 1163128117450 | Հ/Հ ____________________ |
| Տնօրեն՝ Ա.Չախալյան | Տնօրեն՝ ____________________ |
| ---------------------------------- | ---------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1
« » ___________ 2015_թ կնքված
N«ՇՄԳԱՓԿ-ԲԸԱՀԱՊՁԲ-11/15»գնման պայմանագրի

**Շիրակի մարզի «Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի**
**2015թ-ի կարիքների համար գնման ենթակա քիմիական նյութերի**
**տ ե խ ն ի կ ա կ ա ն բ ն ու թ ա գ ի ր**

| N | **Ախտորոշիչ թեստեր** | Դեղաձեւը | Դեղաչափը եւ թողարկման ձեւը |
|---|---|---|---|
| 1 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Հեպատիտ Ց | տուփ | լուծույթների հավաքածու, իմունոֆերմենտային եղանակով Հեպատիտ<Ց> վիրուսի G և M դասի իմունոգլոբուլինների հայտնաբերման համար, հավաքածուն հնարավորություն ընձեռի իրականացնելու 12 անկախ փորձեր |
| 2 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Սիֆիլիս | տուփ | լուծույթների հավաքածու իմունոֆերմենտային եղանակով <Տրեպոնեմա պալլիդումի>գումարային հակամարմինների հայտնաբերման համար, հավաքածուն հնարավորություն ընձեռի իրականացնելու 12 անկախ փորձեր |
| 3 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Հեպատիտ Բ գումարային HBc-Ag-Ab | տուփ | լուծույթների հավաքածու իմունոֆերմենտային եղանակով Հեպատիտ <Բ>core անտիգենի գումարային հակամարմինների հայտնաբերման համար,հավաքածուն հնարավորություն ընձեռի իրականացնելու 12 անկախ փորձեր |
| 4 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/ALT | տուփ | լուծույթների հավաքածու, ֆոտոմետրիկ եղանակով մարդկային շիճուկում ALT հայտնաբերման համար |
| 5 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Հեպատիտ Բ ստրիպ թեստ | տուփ | որակական թեստ, մարդկային շիճուկում Հեպատիտ <Բ> (HBs Ag) հայտնաբերման համար ,2x25 |
| 6 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Հեպատիտ Ց ստրիպ թեստ | տուփ | որակական թեստ, մարդկային շիճուկում Հեպատիտ <C> հակամարմինների հայտնաբերման համար ,2x25 |
| 7 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)ՄԻԱՎ-ՁԻԱՀ ստրիպ թեստ | տուփ | որակական թեստ, մարդկային շիճուկում ՄԻԱՎ հակածին հակամարմինների( Ag-Ab) հայտնաբերման համար |
| 8 | Արյան խումբը որոշող ազդանյութեր(ռեագենտներ)/ Ցոլիկլն հակա- AB | տուփ | լուծույթների հավաքածու (պլաստիկ շշիկներ) արյան խմբերը որոշելու համար -5մլ |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Հեպատիտ B վիրուսի անտիգենի որակական հայտնաբերման թեստ-հավաքածու | տուփ | լուծույթների հավաքածու իմունոֆերմենտային եղանակով Հեպատիտ <Բ> անտիգենի հակամարմինների հայտնաբերման համար,հավաքածուն հնարավորություն ընձեռի իրականացնելու 12 անկախ փորձեր |
| 10 | Բրուցելոզի որոշման թեստ հավաքածու | տուփ | լուծույթների հավաքածու, ագլյուտինացիայի եղանակով բրուցելլայի հակամարմինների հայտնաբերման համար |
| 11 | Ցոլիկլոն անտի-A /արյան խմբի II որոշման թեսթ/ | տուփ | լուծույթների հավաքածու (պլաստիկ շշիկներ) արյան խմբերը որոշելու համար -10մլ |
| 12 | Ցոլիկլոն անտի-B/արյան խմբի III որոշման թեսթ/ | տուփ | լուծույթների հավաքածու (պլաստիկ շշիկներ) արյան խմբերը որոշելու համար -10մլ |
| 13 | Ցոլիկլոն անտի- Սուպեր /rh C ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեսթ | տուփ | լուծույթների հավաքածու (պլաստիկ շշիկներ) արյան ռեզուս պատկանելիությունը որոշելու համար-5մլ |
| 14 | Ցոլիկլոն անտի- Սուպեր / rh D ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեսթ | տուփ | լուծույթների հավաքածու (պլաստիկ շշիկներ) արյան խմբերը որոշելու համար -10մլ |

*Ծանոթություն

Դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝

ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

գ.առանձին դեպքերում,այն է՝հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը ,դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները,դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երրորդը:

դ . Պարտադիր պայման՝ ապրանքը պետք է լինի չօգտագործված

ՇՄ «Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
Գնման պատասխանատու ստորաբաժանման նախագահ՝ Բ.Խաչատրյան

Հավելված 2
« » ____________ 2015_թ կնքված
N«ՇՄԳԱՓԿ-ԲԸԱՀԱՊՁԲ-11/15»գնման պայմանագրի

Շիրակի մարզի «Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի
**2014թ-ի կարիքների համար գնման ենթակա քիմիական նյութերի**
գ ն մ ա ն ժ ա մ ա ն ա կ ա ց ու յ ց

| N | Քիմիական նյութեր | Դեղաձեւը | Գնման ենթակա քանակները | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Ախտորոշիչ թեստեր** | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Հեպատիտ Ց | տուփ | 3 | 3 | 3 | 3 | 12 |
| 2 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Սիֆիլիս | տուփ | 3 | 3 | 3 | 3 | 12 |
| 3 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Հեպատիտ Բ գումարային HBc-Ag-Ab | տուփ | 3 | 3 | 3 | 3 | 12 |
| 4 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/ALT | տուփ | 1 | 1 | 1 | | 3 |
| 5 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Հեպատիտ Բ ստրիպ թեստ | տուփ | 2 | 1 | 1 | 1 | 5 |
| 6 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Հեպատիտ Ց ստրիպ թեստ | տուփ | 1 | 1 | 1 | 1 | 4 |
| 7 | Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)ՄԻԱՎ-ՁԻԱՀ ստրիպ թեստ | տուփ | 1 | 1 | | | 2 |
| 8 | Արյան խումբը որոշող ազդանյութեր(ռեագենտներ)/ Ցոլիկլն հակա- AB | տուփ | 1 | 1 | | | 2 |
| 9 | Հեպատիտ B վիրուսի անտիգենի որակական հայտնաբերման թեսթ-հավաքածու | տուփ | 4 | 3 | 3 | 3 | 13 |
| 10 | Բրուցելոզի որոշման թեստ հավաքածու | տուփ | 1 | | | | 1 |
| 11 | Ցոլիկլոն անտի-A /արյան խմբի II որոշման թեսթ/ | տուփ | 3 | 2 | 3 | 2 | 10 |
| 12 | Ցոլիկլոն անտի-B/արյան խմբի III որոշման թեսթ/ | տուփ | 3 | 2 | 3 | 2 | 10 |
| 13 | Ցոլիկլոն անտի- Սուպեր /rh C ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեսթ | տուփ | 1 | 1 | 1 | 1 | 4 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | Ցոլիկլոն անտի- Սուպեր / rh D ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեսթ | տուփ | 3 | 2 | 3 | 2 | 10 |

ՇՄ «Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ
Գնման պատասխանատու ստորաբաժանման նախագահ՝ Բ.Խաչատրյան

Հավելված 3
«  »  _____________2015_թ  կնքված
N«ՇՄԳԱՓԿ-ԲԸԱՀԱՊՁԲ-11/15»գնման պայմանագրի

Շիրակի մարզի «Գյումրիի արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ի **2015** թ-ի կարիքների համար գնման ենթակա քիմիական նյութերի  վճարման ժամանակացույց

| N | Գնման ենթակա ապրանքի անվանումը | Ֆինանսավորումը կատարվելու է ՀՀ 2015թ-ին նախատեսվող բյուջետային միջոցների հաշվին | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | **Ախտորոշիչ թեստեր** | Պայմանա գրային գումարի 25% | Պայմանա գրային գումարի 50% | Պայմանա գրային գումարի 75% | Պայմանա գրային գումարի 100% | Պայմանա գրային գումարի 100% |

ՇՄ «Գյումրու արյան փոխներարկման  կայան» ՓԲԸ
Գնման պատասխանատու ստորաբաժանման նախազահ`                Բ.Խաչատրյան